



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԷՋ

### ԵԿԵՂԵՑԻՆ ԴՈՒՐՍ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

#### ՊԱՏԳԱՍԵՅ ԱՐԱՄ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ֆրեզնոյի հայութեան ու յատկապէս Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ ծխական համայնքի պատմութեան մէջ, Կիրակի, 9 Յոկտեմբեր 2011ը պիտի արձանգրուի իբրեւ պատմական ու յիշատակելի թուական:

Արդարեւ, Զալիֆորնիոյ ամենէն վաղեմի հայ գաղութին իր շնորհած այցելութեան առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հայրապետական Ս. Պատարագ մատուցեց դարաւոր եկեղեցւոյ մէջ եւ հաւատացեալներուն ուղղեց պատգամ մը՝ վեր առնելով հաւատքի, հետեւելու ու յանձնառութեան, եւ եկեղեցւոյ կեանքին մասնակից ըլլալու անհրաժեշտութիւնը: Աղօթակից էին Թեմիս ու Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբազանները, գաւազանակիր Հայր Սուրբը, իսկ ներկայ հաւատացեալներուն շարքին էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան, Թեմիս Ժողովականութեան անդամներն ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Խօսելով հաւատքի կարեւորութեան ու արժեքին մասին, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ քրիստոնեային համար հաւատքի աղբիւրը նոյնիսքն Զրիստոս է, եւ ոչ թէ տեսական գաղափարներն ու տարբեր մեկնաբանութիւնները: Հաւատք ունենալը քրիստոնեայ մարդուն համար խաղաղ ու արդիւնաւոր կեանքի նախադրեալ է, սակայն պէտք է գիտնալ, որ սոսկ հաւատք ունենալը, Աւետարան ընթերցելը բաւարար չեն, այլ պէտք է կիրարկել հաւատքը, իրական կեանքի մէջ գործնապէս ապրի՛լ զայն, Աւետարանին արժեքն ու սկզբունքները թարգմանել ու կիրարկել մեր կեանքին մէջ: Վեհափառ Հայրապետը նաեւ ընդգծեց, որ քրիստոնեական կեանքի կիրարկում կը նշանակէ՝ մաս կազմել եկեղեցւոյ, որովհետեւ եկեղեցին կ'իմաստաւորուի հաւատացեալներով, եկեղեցւոյ կեանքին իր գաւակներուն մասնակցութեամբ: «Եկեղեցիէն դուրս քրիստոնեութիւն չկայ, եկեղեցիէն դուրս քրիստոնեութիւն փնտռելը հերետիկոսութեան համազօր է», շեշտեց Վեհափառ Հայրապետը, ու յորդոր ուղղեց բոլորին, որ իրենց

հաւատքն ու յանձնառութիւնը մարմնաւորեն եկեղեցւոյ կեանքին մասնակցութեամբ:

Նշենք, որ եկեղեցւոյ մուտքին ու Ս. Պատարագի ընթացքին, Զ.Մ.Ը.Մ.ի սկաւտները պատուի կանգնած էին:

#### ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԶԵՏ

Ս. Պատարագին ներկայ էին Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ կողքին գործող Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, որոնք մասնակցութիւն բերին Ողջոյնի շարականի երգեցողութեան: Յաւարտ Ս. Պատարագի, Վեհափառ Զայրապետն ու շքախումբը այցելութիւն մը տուին Կիրակնօրեայ Դպրոց ու մտերմիկ պահ մը բոլորեցին աշակերտներուն ու դաստիարակներուն հետ:

Երկու աշակերտներ ողջոյնի խօսք ուղղեցին Վեհափառ Զայրապետին ու ընկերակիցներուն: Վեհափառ Զայրապետը բարձր գնահատեց այս ուսումնարանն ու անոր ծառայողները, վեր առնելով հինաւուրց այս գաղութին մէջ հայ դպրոցին դերն ու կարեւորութիւնը: Ան գրոյց ունեցաւ աշակերտներու հետ եւ պատասխանեց անոնց հարցումներուն, յորդորեց աշակերտները, որպէսզի հաւատարիմ մասն մեր եկեղեցական ու ազգային աւանդներուն, եւ անոնցմէ խոստում ստացաւ թէ պահապան պիտի ըլլան մեր ժառանգութեանց, իրենց կեանքերը պիտի հարստացնեն քրիստոնական ու հայկական արժէքներով:

### **PONTIFICAL DIVINE LITURGY AND MESSAGE AT HOLY TRINITY CHURCH IN FRESNO**

October 9, 2011 will be remembered as a historic day for the Fresno Armenian Community and specifically for the Holy Trinity Church family.

On that day, His Holiness Catholicos Aram I, during his Pontifical visit to Fresno celebrated Divine Liturgy in the historic church and delivered his Pontifical message to the faithful.

Participating in the Liturgy were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and Staff Bearer Very Rev. Mesrob Sarkissian. Present were members of the Central Executive and Executive Council, and hundreds of faithful. His Holiness Aram I was greeted by the Deacons and the Choir of the church at the footsteps of the church. Also, greeting His Holiness were the Homenetmen Scouts of the Sassoon Chapter to honor His Holiness.

During the extraordinary and beautiful Liturgy, the students of the Holy Trinity Armenian Apostolic Church sang the ՔChristos Ee Mech.ՄՆ His Holiness Aram I then delivered his Pontifical message, speaking about the importance of having faith. His Holiness added that only by believing in our Lord Jesus Christ can one be a true Christian. Having faith brings a sense of peace and strength to humanity. His Holiness explained that being a true

Christian does not necessarily mean to simply follow Bible studies but to actually live the Christian life. One must apply the meanings in the Bible and apply them in one's own personal life. Doing this also means that one must participate in the church and by doing so, the Church brings meaning to our lives and our children's lives. His Holiness concluded by urging the faithful to demonstrate their faith and commitment by actively participating in Church life.

#### MEETING WITH THE SUNDAY SCHOOL STUDENTS

After the Divine Liturgy, His Holiness Aram I went to greet and speak to the Sunday school children, who had been anxiously waiting for him. The children and many of their parents as well warmly greeted His Holiness. Board member Mr. Michael Sarabian delivered his welcoming remarks and introduced Mrs. Sato Sanikian, who also gave her welcoming remarks. Sunday School students Nareg Apkarian and Gohar Sanikian welcomed His Holiness both in Armenian and English.

His Holiness Aram I spoke to the children and encouraged them to lead a Christian life. He then gave the children an opportunity to ask him a number of questions which he answered in a very endearing manner.